

կը քերէ Մպատայ արևելեան հիւսիսային ոտքը, ուր Ս. Գրիգոր հայոց բերաւորներն մկրտած է, ջուրն իւր ընթացք ի հիւսիս յարեմուտս շարունակելով կը քերէ այս լեռան արեմտեան հիւսիսային ոտքը, կանցնի հինաւուրց շինած կամուրջի մի տակից:

Ջուրը այս ընթացքի մէջ ի ձախ Մպատայ ստորտը գոգին մէջ կը թողու զԲագուան, ¹ այժմեան Ս. Յովհաննու վանքն (Իւչ-քիլիսան), որ երեք կողմէ շրջապատած է Մպատ, ի հիւսիսից պատած է նաև Մուրատ:

Մուրատ իւր ընթացք նոյն ուղղութեամբ օձապտոյտ կը շարունակէ, երկու ժամ ընթացքէ յետոյ կը զարնուի մեծ մեծ ժայռերու, ոյք հրաբլխային ժայռեր կը կարծուին և Սինակ լեռներէն դնորուած:

Մուրատ իւր ընթացք կը շարունակէ, տակաւ առ տակաւ կը պատահի աջ կողմից Ալիկոռ, Վերին և Մերքին Դաշլի-չայ, Ավա մասի (Չկան ջուր), Եքմալ, Զիրոյ, Ղաղի, Եօնճալու և Ղարաքիլիսայ գիւղօրէից. իսկ ձախ կողմից վանքի գիւղ. Ղումլիպուճախ, Ղումլուճա, Կօլասօր, Կեառկեառ (Խուլեր), Սոֆեան, Ղաղարի, Գուփղուան, Տամբար: ²

1. Տեսնուած աւերակներ կը հաստատեն, որ Բագուան ջրի աջն հանդէպ վանքին լինելու է, որպէս վանքի միաբաններն ևս կը հաստատեն:

2. Վերջին դարու քանի աշխարհագիրներ կարծած են թէ Տամբար Երասխի ափը կը գտնուի, մինչդեռ Մուրատ գետ յարեմուտս դարձած վայրը ձախ կողմն կազմած անկնան գիւղիսը կայ: